

# ԿԱՆՈՒՆ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐՈՒԿ

## GANTEGH

BULLETIN DU DIMANCHE  
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE  
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



## GANTEGH

SUNDAY BULLETIN OF  
ST. GREGORY THE ILLUMINATOR  
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

[WWW.SAINTGREGORY.CA](http://WWW.SAINTGREGORY.CA)

**ԿԻՐԱԿԻ, 20 ՅՈՒՆՈՒՆ 2019**

**Ա. Կիրակի զկնի ճննդեան /ԹԻ 94**

**DIMANCHE, 20 janvier 2019**

**1<sup>er</sup> Dimanche après Noël /NO. 94**

**Աստուածաշունչի Ընթերցումներ**

**1 Տիմոթեոս 1-11/**

**Աւետարան Ըստ Յովհաննէսի**

**2.1-11**

**Les lectures de la Bible  
d'aujourd'hui:**

**1 Timothée: 1-11 | Jean 2.1-11 |**

**Պատարագիչ՝**

**ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ԲՅՆՅ. ՍԱՐԳԱՐԵԱՆ**

**Հոգևոր Հովի**

**Célébrant:**

**RÉV. PÈRE DAVID MARGARYAN**

**Prêtre Paroissial**

**Office Matines à 9 :30 - Առաւօտեան ժամերգութիւն 9:30-ին**

**La Sainte Messe à 10:30 - Ա. Պատարագ ժամը 10:30-ին**

**Office de Requiem à Midi - Հոգեհանգստեան Պաշտօն կէսօրին**

**Deacons/Acolytes**

**Choirmaster: Mr. Sarkis Barsemian**

**Organist: Mr. Karen Manucharyan**




615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԵ

### ՏԻՄՈԹԵՈՍԻ ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԵՆ 1.1-11

**1** Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ մեր Փրկիչ Աստուծոյ եւ մեր յոյսը եղող Քրիստոս Յիսուսի՝ հրամանով, **2** Տիմոթեոսի՝ հաւատքով հարազատ զաւակիս. շնորհք, ողորմութիւն ու խաղաղութիւն Աստուծմէ՝ մեր Հօրմէն, եւ Քրիստոս Յիսուսէ՝ մեր Տէրոջմէն: **3** Բեզի աղաչեցի որ Եփեսոս մնաս, երբ ես Մակեդոնիա կ'երթայի, որպէսզի պատուիրես ոմանց՝ ուրիշ կերպով չսորվեցնել, **4** ո՛չ ալ ուշադրութիւն դարձնել առասպելներու եւ անվերջանալի ազգաբանութիւններու, որոնք կը պատճառեն վեճեր՝ փոխանակ Աստուծոյ հաճելի շինութեան, որ կ'ըլլայ հաւատքով: **5** Իսկ պատուէրին վախճանը սերն է՝ բխած սուրբ սիրտէ, բարի խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէ: **6** Ասոնցմէ վրիպելով՝ ոմանք խոտորեցան փուճ խօսքերու մէջ. **7** կ'ուզեն Օրէնքի վարդապետ ըլլալ, բայց չեն հասկնար ո՛չ ինչ որ կը խօսին, ո՛չ ալ այն բաները՝ որոնց վրայ կը պնդեն: **8** Սակայն գիտենք թէ Օրէնքը լաւ է, եթէ մէկը գործածէ զայն օրինաւոր կերպով, **9** սա՛ գիտնալով թէ Օրէնքը տրուած է ո՛չ թէ արդարներուն համար, հապա՝ անօրէններուն եւ ըմբոստներուն, ամբարիշտներուն ու մեղաւորներուն, անսուրբերուն եւ սրբապիղծներուն, հայր զարնողներուն, մայր զարնողներուն, մարդասպաններուն, **10** պոռնկողներուն, արուագէտներուն, մարդ գողցողներուն, ստախօսներուն, երդմնազանցներուն, եւ ուրիշ որեւէ բանի համար՝ որ հակառակ է ողջամիտ վարդապետութեան, **11** համաձայն երանելի Աստուծոյ փառաւոր աւետարանին՝ որ վստահուեցաւ ինձի:

### ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 2.1-11

**1** Երրորդ օրը հարսանիք մը կար Գալիլեայի Կանա քաղաքը, եւ Յիսուսի մայրը հոն էր: **2** Յիսուս ալ հրավիրուեցաւ այդ հարսանիքին, նաեւ՝ իր աշակերտները: **3** Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը ըսաւ անոր. «Գինի չունին»: **4** Յիսուս ըսաւ անոր. «Կի՛ն, դուն ի՛նչ ունիս ինձի հետ. իմ ժամս դեռ հասած չէ»: **5** Իր մայրը ըսաւ սպասարկուներուն. «Ի՛նչ որ ըսէ ձեզի՝ ըրէ՛ք»: **6** Հոն վեց քարէ կարաս դրուած էր՝ Հրեաներուն մաքրուելու սովորութեան համաձայն. իւրաքանչիւրը կը պարունակէր երկու կամ երեք մար: **7** Յիսուս ըսաւ անոնց.

«Լեցուցէ՛ք այդ կարասները ջուրով». ու լեցուցին զանոնք՝ մինչեւ բերանը: **8**Եւ ըսաւ անոնց. «Յիմա հանեցէ՛ք ու տարէ՛ք սեղանապետին». անոնք ալ տարին: **9**Երբ սեղանապետը համտեսեց գինի դարձած ջուրը՝ չէր գիտեր ուրկէ՛ ըլլալը (բայց սպասարկուները՝ որոնք հաներ էին ջուրը՝ գիտէին): Սեղանապետը կանչեց փեսան **10**եւ ըսաւ անոր. «Ամէն մարդ նախ կը մատուցանէ լաւ գինին, ու երբ արբեցած ըլլան՝ ա՛յն ատեն ցածորակը. բայց դուն լաւ գինին պահեցիր մինչեւ հիմա»: **11**Յիսուս իր նշաններուն սկիզբը ըրաւ ասիկա՝ Գալիլեայի Կանա քաղաքին մէջ, եւ ցոյց տուաւ իր փառքը. ու իր աշակերտները հաւատացին իրեն:

## 1 Timothée 1-11

**1** Paul Apôtre de Jésus-Christ par le commandement de Dieu notre Sauveur, et du Seigneur Jésus-Christ, notre espérance :

**2** A Timothée mon vrai fils en la foi; que la grâce, la miséricorde et la paix te soient données de la part de Dieu notre Père, et de la part de Jésus-Christ notre Seigneur.

**3** Suivant la prière que je te fis de demeurer à Ephèse, lorsque j'allais en Macédoine, [je te prie encore] d'annoncer à certaines personnes de n'enseigner point une autre doctrine; **4** Et de ne s'adonner point aux fables et aux généalogies, qui sont sans fin, et qui produisent plutôt des disputes, que l'édification de Dieu, laquelle consiste en la foi. **5** Or la fin du Commandement, c'est la charité qui procède d'un cœur pur, et d'une bonne conscience, et d'une foi sincère : **6** Desquelles choses quelques-uns s'étant écartés, se sont détournés à un vain babil. **7** Voulant être docteurs de la Loi, [mais] n'entendant point ni ce qu'ils disent, ni ce qu'ils assurent.

**8** Or nous savons que la Loi est bonne, si quelqu'un en use légitimement.

**9** Sachant ceci, que la Loi n'est point donnée pour le juste, mais pour les iniques, et pour ceux qui ne se peuvent point ranger; pour ceux qui sont sans piété, et qui vivent mal; pour des gens sans religion, et pour les profanes; pour les meurtriers de père et de mère, et pour les homicides; **10** Pour les fornicateurs, pour ceux qui commettent des péchés contre nature, pour ceux qui dérobent des hommes, pour les menteurs, pour les parjures, et contre telle autre chose qui est contraire à la saine doctrine; **11** Suivant l'Évangile de la gloire de Dieu bienheureux, lequel [Évangile] m'a été commis.

## Jean 2.1-11

**1**Or trois jours après on faisait des noces à Cana de Galilée, et la mère de Jésus était là. **2**Et Jésus fut aussi convié aux noces, avec ses Disciples. **3**Et le vin étant venu à manquer, la mère de Jésus lui dit : ils n'ont point de vin. **4**Mais Jésus lui répondit : qu'y a-t-il entre moi et toi, femme? mon heure n'est point encore venue. **5**Sa mère dit aux serviteurs : faites tout ce qu'il vous dira. **6**Or il y avait là six vaisseaux de pierre, mis selon l'usage de la purification des Juifs, dont chacun tenait deux ou trois mesures. **7**Et Jésus leur dit : emplissez d'eau ces vaisseaux. Et ils les emplirent jusques au haut. **8**Puis il leur dit : versez-en maintenant, et portez-en au maître d'hôtel. Et ils lui en portèrent. **9**Quand le maître d'hôtel eut goûté l'eau qui avait été changée en vin, (or il ne savait pas d'où cela venait, mais les serviteurs qui avaient puisé l'eau, le savaient bien,) il s'adressa à l'époux. **10**Et lui dit : tout homme sert le bon vin le premier, et puis le moindre après qu'on a bu plus largement; [mais] toi, tu as gardé le bon vin jusqu'à maintenant. **11**Jésus fit ce premier miracle à Cana de Galilée, et il manifesta sa gloire, et ses Disciples crurent en lui





# Հոգեւոր Հովիւի Պատգամը Կանայի Հարսանիքը

Յանուկն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն  
Սրբոյ

Արդ, եօթը օրեր առաջ ուրախացանք  
ուրնօրեայ մանուկ Յիսուսին տաճար  
ուղեկցելով, իսկ այսօր  
տեղափոխուինք Գալիլիոյ Կանա  
քաղաքը եւ միասին ականատես  
ըլլանք այն առաջին հրաշքին, որ  
գործեց մեր Տէրը Յիսուս Քրիստոս:




Յովհաննէսի Աւետարանին մէջ կը կարդանք, որ այս դէպքը տեղի ունեցաւ  
մեր Տիրոջ մկրտութենէն շատ չանցած, այսինքն՝ Երկրի վրայ Իր  
առաքելութեան իրականացման ճիշդ սկիզբը, երբ Ան Իր առաջին  
աշակերտներուն հետ Յորդանանի կողմերէն Գալիլիա գնաց: Աւետարանիչը  
կը պատմէ, որ Գալիլիոյ Կանա քաղաքին մէջ հարսանիք կար, որուն  
Մարիամ Աստուածածինն ալ հրաւիրուած էր եւ ուր հրաւիրեցին նաեւ՝  
Յիսուսին եւ Իր աշակերտները: Եւ պատահեցաւ այնպէս, որ հարսանեկան  
խնճոյքի թէժ պահուն գինին պակսեցաւ եւ մայրը այդ մասին ըսաւ  
Յիսուսին: Յիսուս նախ պատասխանեց, որ Իր ժամանակը դեռ չէ հասած,  
բայց յետոյ սպասաւորներուն պատուիրեց, որ այնտեղ գտնուող ջուրի վեց  
կարասները բերնբերան ջուրով լեցնեն եւ տանին սեղանապետին՝  
համտեսելու համար: Եւ երբ սեղանապետը համտեսեց՝ սքանչացաւ այդ  
բարձրակարգ գինիէն, որ Տիրոջ ամենակարող զօրութեամբ  
փոխակերպուած էր ջուրէն, եւ զարմացաւ, թէ փեսան ինչու պահած էր այդ  
հրաշալի գինին եւ հարսանիքի սկիզբը չէր հրամցուցած իր հիւրերուն  
(Յովհ. 2:1-11): Ահա այս պատմութիւնն է, սիրելի՛ հաւատացեալներ, որ  
օրուան աւետարանական ընթերցուածքն է եւ որուն մասին պիտի խօսիմ  
այսօր:

Սիրելիներ՛, կարդալով Աւետարանը եւ հետեւելով Եկեղեցւոյ  
մեկնութիւններուն, բոլորդ ալ գիտեք, որ Սուրբ Գիրքի Էջերուն մէջ տեղ  
գտած պատմութիւնները, Տիրոջ առակներն ու խրատները, Անոր սուրբ  
շրթունքներէն հնչած իւրաքանչիւր խօսք իրենց մէջ կը թաքցնեն շատ աւելի  
խոր իմաստ, քան ընթերցողին կը թուի առաջին հայացքով: Կանայի  
հարսանիքին տեղի ունեցածն ալ շատ արտասովոր չի թուիր ըլլալ այն  
իրադարձութիւններուն համեմատութեամբ, որ տեղի պիտի ունենան յետոյ՝



Աստուծոյ որդիին բացայայտ գործունեութեան ընթացքին: Անկէ ետքն է, որ մարդացեալ Աստուած կը մտնէ մարդկային ցաւի ու տառապանքի մռայլ հորձանուտը՝ բժշկելու կոյրերն ու բորոտները, ազատելու դեւերու կապանքներէն, ննջեցեալները վերադարձնելու մեռեալներու աշխարհէն, բայց այդ ամենը յետոյ, իսկ այժմ Անոր անսահման պարզութեան եւ մարդամօտութեան ժամանակն է. Ան սիրով ընդունած է իր ծանօթներու հրաւերը, եկած է կիսելու անոնց ուրախութիւնը եւ այդ միջոցին կը կատարէ հրաշք մը, որ կարծես ոչ մէկ առնչութիւն ունի իր փրկագործ առաքելութեան հետ: Սակայն, այս առաջին՝ մակերեսային հայացքէն միայն:

Քրիստոսի երկրային կեանքի հետագայ ընթացքին ալ կը տեսնենք, որ Աստուծոյ Բանը բազմաթիւ անգամ մասնակցեցաւ ուրախութեան սեղաններու՝ իրեն հեռու չպահելով մարդկային պարզ ուրախութիւններէն եւ չխորշելով մեղաւոր մարդոց ընկերակցութենէն, քանի որ ինչպէս ինք ըսաւ. «Առողջներուն բժիշկ պետք չէ, այլ՝ հիւանդներուն. եւ ես չեմ եկած արդարները կանչելու, այլ՝ մեղաւորները» (Մրկ. 2:14-17): Ինչպէս նաեւ այս կը խօսի այն մասին, որ նախ՝ ամէն ինչ իր ժամանակը ունի, ինչպէս ըսած է Սողոմոն Իմաստուն թագաւորը իր Ժողովող գիրքին մէջ (3:1-8), եւ յետոյ՝ ամէն ինչ կախուած է անկէ, թէ նախ՝ ինչ նպատակ ունի եւ ինչի կը ծառայէ տուեալ գործը կամ իրադարձութիւնը, եւ ինչ միտքով ու սիրտով մենք կը մասնակցինք անոր: Քրիստոսի պարագային ամէն ինչ պարզ է՝ նախ՝ ուր ալ Ան երթար, ամէն ինչ կը սրբէր իր աստուածային ներկայութեամբ, իսկ այս հարսանիքի պարագային Տէր Յիսուս տեսաւ, որ այդ ոչ մէկ կերպով չի հակասեր իր փրկագործ առաքելութեան: Իսկ մեր դէպքին պայմանը այն է թէ՛ եթէ մենք ալ Քրիստոսի սրբութիւնը կը կրենք մեր ներսը, եթէ ամէն պարագային Անոր ապաւինութեան կը դիմենք եւ իմաստութիւն կը հայցենք իրմէ, ապա մենք ալ վստահօրէն կը պահպանենք մեր մաքրութիւնը, զերծ կը մնանք գայթակղութիւններէն ու մեղաւոր կիրքերէն՝ ինչ միջավայրի մէջ ալ յայտնուինք: Այս առաջին կետն էր, որուն վրայ կ'ուզէի ձեր ուշադրութիւնը հրաւիրել, սիրելի՛ հաւատացեալներ, իսկ երկրորդ կարեւոր կետը Սուրբ Աստուածամօր անփոխարինելի դերն է այս պատմութեան մէջ:



Մարդասէր Մայրը տեսաւ, որ հարսանիքի տէրերը այդ պահունկը գտնուին լուրջ նեղութեան, կարիքի առջեւ, քանի որ հարսանեկան խնճոյքի անբաժան մասը հանդիսացող գինին սպառած էր, իսկ այդ ամօթ էր տանտէրերուն համար եւ կը սպառնար խայտառակութեան վերածուիլ: Եւ Գթասիրտ Մայրը,

ինչպես այսօր ալ կարեկից կը դառնայ կարիքի մէջ յայտնուողներուն, եւ կը բարեխօսէ իր Միածինին առջեւ, այնպես ալ այն օրը անտարբեր չմնաց, եւ մայրական սիրով լեցուն սիրտը շտապեց օգնութեան ձեռք մեկնել

նեղութեան մէջ յայտնուողներուն: Իր Որդւոյն հրաշափառ ծնունդը եւ իրեն շնորհուած անտիսը անկասկած շատ բաներ բացայայտած էին մօր խորաթափանց սիրտին իր Որդւոյն մեծութեան ու զօրութեան մասին, ուստի մայրական վստահութեամբ եւ հաւատքով Սուրբ Մարիամը կը դիմէ Որդիին օգնութեան: Ան հրաշալի կը ճանչնայ իր Միակին ու Անոր գթասրտութիւնը, եւ գիտէ, որ պետք չկայ ըսելու, թէ ինչ պետք է ընել, այլ ուղղակի խոնարհութեամբ կը ներկայացնէ ինդիրը. «Գինի չունիս»:



Եւ այստեղ բացայայտ կերպով երեւան կու գայ Տէր Յիսուս Քրիստոսի սերը իր սուրբ մօր նկատմամբ: Ան մօրը չի ստիպեր կրկնել ըսածը, ոչ ալ կը սպասէ, որ մայրը աղաչէ իրեն, հոգ չէ թէ տակաւին շուտ էր իր աստուածային արարչագործ եութիւնը ամբողջապէս բացայայտելու համար, չի մերժեր մօրը բարեխօսութիւնը ու կը շտապէ կատարել զայն: Այս կարեւորագոյն խրատ է մեզի համար, սիրելի՛ եղբայրներ եւ քոյրեր, որպէսզի երբեք չմոռնանք Աստուածածնի բարեխօսութեան զօրութեան մասին եւ մեծ հաւատքով հայցենք անկէ այդ ողորմածութիւնը: Սակայն չմոռնանք նաեւ այն լուրջ նախապայմանը, որ Սրբուհի Մայրը ըսաւ սպասուորներուն. «Ինչ որ ձեզի ըսէ, ըրէ՛ք» (Յովհ. 2:5): Եկեղեցւոյ սուրբ հայրերը կ'ըսեն, որ այս մէկ նախադասութեամբ Մարիամ Աստուածածինը քարոզեց ողջ Աւետարանը եւ մեզի տուաւ երջանկութեան բանալին, քանի որ ամէն բան՝ թէ՛ մեր խնդրած հրաշքները, թէ՛ բժշկութիւնները, թէ՛ դէպի յաւիտենական կեանք տանող ճանապարհը կախուած են անկէ, թէ որքանով կը կատարենք, այն ինչ որ կ'ըսէ Տէր Յիսուս Քրիստոս: Այս մէկ տողով Աստուածածինը մեր հայացքները դէպի Երկինք կ'ուղղէ, քանզի այն գինին, որ Երկինքէն կ'աղերսենք, անիմաստ է փնտռել երկրի ջուրին մէջ:

Երրորդ ուշագրաւ պահը, որուն մասին կը խօսիմ, շատ խորհրդանշական է, եւ այն դրուագներէն մեկն է, որուն խորքը իսկապէս մեծ իմաստ թաքնուած է: Խօսքս այն մասին է, թէ Տիրոջ առաջին հրաշքին համար ինչու անպայման ջուրը օգտագործուեցաւ գինին փոխակերպելու համար: Այս բացատրելու համար կրկին կը դառնանք Աւետարանին եւ կը տեսնենք, որ պատահական չէ, որ Յովհաննէս Աւետարանիչը կը նշէ. «Այնտեղ կային քարէ վեց թակոյկներ՝ հրեաներու սովորութեան համաձայն մաքրուելու համար. անոնցմէ իւրաքանչիւրը շուրջ հարիւր լիդր տարողութիւն ունէր: Յիսուս

անոնց ըսաւ. «Լեցուցէ՛ք այդ թակոյկները ջուրով» (2:6, 7): Այսինքն, Տէր Յիսուս օգտագործեց այն ջուրը, որուն միջոցով հրեաները, իրենց սովորութեան համաձայն, կը մաքրուէին նախքան ծիսական որելէ պաշտամունքի անցնիլը: Եւ միայն այդ ջուրը գինիի վերածելով՝ Մարդացեալ Աստուած ցոյց տուաւ, որ այդ այլեւս ի զօրու չէր մաքրագործել հրեաները, որ անցած էր ջուրին ժամանակը եւ եկեր էր Նոր Ուխտի գինիին՝ Քրիստոսի սուրբ արեան ժամանակը, որուն միջոցով միայն հնարաւոր էր այսուհետեւ սրբուիլ մեղքերէն եւ ստանալ այն փրկութիւնը, որ Աստուած խոստացած էր իր հաւատարիմներուն (Մտթ. 26:27, 28):

Սիրելիներ, տեսանք, որ Կանայի հարսանիքը սպասաւորող պարզ սպասաւորները անխօս ենթարկուեցան Քրիստոսի խօսքին եւ հրաշքին ականատես եղան: Նոյնին կրնանք մենք եւս արժանանալ, ընտրութիւնը մերն է, սակայն մեզ մղող դրդապատճառը ոչ թէ միայն հրաշք տեսնելու գայթակղութիւնը պէտք է ըլլայ, քանի որ մեզի պարգեւուած իւրաքանչիւր արեւածագ արդէն իսկ հրաշք է, այլ կատարեալ հնազանդութիւն Աստուծոյ սուրբ կամքին եւ խօսքին: Ուրեմն, միասին աղաչենք Երկնային Թագուհիին, Բարեխնամ Մօր եւ Կոյսին բարեխօսութիւնը իր Միածինին առջեւ, որպէսզի Քրիստոսի պարգեւած սրբութիւնը ծլարձակի եւ աճի մեր հոգիներուն մէջ, մեր սիրտերը կենդանի անօթներ դառնան Անոր անմահական գինիին համար, մեր կեանքի ուրախութեան եւ տխրութեան պահերուն միշտ Տիրոջ ներկայութիւնը խնդրենք մեր կողքին, եւ Տէրը արժանացնէ մեզ իր Ամմեղ Գառան սուրբ արիւնով տրուած փրկութեան, քանզի չկայ ակեղ երանելի բան մարդուն համար, քան Տիրոջ պատրաստած երկնային հարսանիքին մասնակից ըլլալը:

Աստուծոյ սէրը, շնորհն ու խաղաղութիւնը բոլորիդ: Ամէն:

Օրհնութեամբ՝  
Տ. Դաւիթ քահանայ Մարգարեան  
Յոգեւոր հովիւ



# Résumé du Sermon


En ce temps-là il y eut des noces à Cana, en Galilée. Jésus était invité, ainsi que sa Mère et ses disciples. Au cours du repas le vin vint à manquer et Marie dit à Jésus: << Ils n'ont plus de vin >>. Jésus répondit: << Que veux-tu, mon heure n'est pas encore venue >>. Nous connaissons les faits, transformation de l'eau en vin par Jésus et c'est à Cana que les Disciples ont commencé à croire en Lui.

On voit que Marie se situe entre son Fils et les hommes dans leurs souffrances, elle cherche la joie des invités c'est à dire de l'humanité et cette joie ne peut venir que par son fils.

Nous sommes tous invités à cette noce de Cana afin que le vin nouveau ne vienne plus à manquer.

La bonne nouvelle c'est que nos souffrances intéressent Jésus. Il est touché par ce que nous vivons avec nos prières et notre foi.

En Foi et en Prière  
Père David Margaryan  
Prêtre paroissial





## **ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ ՀԱԲԱՏՔՈՎ ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ**



**(Քրիստոսի հաւատացող իւրաքանչիւր անձի աղօթք)**

**13. Երկնաւոր թագաւոր, տո՛ւր ինձի քու արքայութիւնդ՝ զոր քեզ սիրողներուն խոստացար. եւ զօրացո՛ւր իմ սիրտս՝ որպէսզի մեղքը ատեմ եւ միայն քե՛զ սիրեմ եւ քու կամքդ կատարեմ. եւ ողորմե՛ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս:**

**14. Արարածներդ ինձամող Տէր, քու խաչիդ նշանովը հեռո՛ւ պահէ հոգիս եւ մարմինս մեղքի խաբկանքներէն, դէւերու փորձութիւններէն, անիրաւ մարդերէն եւ հոգիի ու մարմինի ամեն տեսակի վտանգներէն. եւ ողորմե՛ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս:**

**15. Դուն՝ որ բոլորին պահապանն ես, Քրիստոս, քու աջդ թող հովանի՝ ըլլայ իմ վրաս՝ գիշեր ու ցերեկ, տան մէջ նստած ատենս թէ ճամբան գացած ատենս, քնացած թէ արթնցած ատենս, որպէսզի երբեք չսասանիմ. եւ ողորմե՛ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս:**

**(Շարունակելի)**





## **JE CONFESSE AVEC FOI**



**13. Ô Roi céleste, donne-moi ce Royaume qui est tien et que tu as promis à tes bien-aimés; fortifie mon cœur : qu'il haisse le péché, pour n'aimer que Toi seul et accomplir ta volonté. Aie pitié de tes créatures et de moi, si grand pécheur!**

**14. Toi qui prends soin des créatures, par le signe de ta Croix, préserve mon âme et mon corps des illusions du péché, des tentations des démons et des hommes iniques et de tous les périls de l'âme et du corps. Aie pitié de tes créatures et de moi, si grand pécheur!**

**15. Gardien de tous, ô Christ, que ta dextre soit ma protection, de jour et de nuit, que je sois assis dans ma maison ou que je marche sur la route, que je dorme ou que je me lève : que jamais donc je ne sois ébranlé! Aie pitié de tes créatures et de moi, si grand pécheur!**

**(à suivre)**





## ՇԱԲԱՌՈՒԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ

«Մեծ հրաշք չէ հրեշտակներ տեսնելը,  
մեծ հրաշք է սեփական մեղքերը տեսնելը...»

Ս. Անտոն Մեծ



# ՏՕՆԵՐ

Շաբաթ, 19 Յունուար 2019

## Ս. ԹԵՈՒՊՈՒ ԹԱԳԱԼՈՐԻ ԵՆ ԵՓԵՏՈՍԻ ՄԱՆԿԱՆՑ ՅԻՉԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՕՐ

Սուրբ Թեոդոս թագաւորը եւ մեծահամբաւ զօրավարը, որուն տրուած է նաեւ Մեծն Թեոդոս անունը, քրիստոնեայ աշխարհին յայտնի է որպէս ուղղափառութեան մեծագոյն ջատագով ու պաշտպան: 379 թուականին նշանակուելով Արեւելքի կայսր, բարեպաշտ Թեոդոսը առաջին հերթին կը վերադարձնէ նախորդ կայսրի հրամանով արքայութեան ուղղափառ բոլոր

եպիսկոպոսները, որոնց թիւին մէջն էր նաեւ, ըստ «Վարք Սրբոցի», հայոց Ներսէս հայրապետը: Ուղղափառ հաւատքի զօրացման համար կը կարեւորուի 381 թուականին անոր հրամանով գումարուած Կ.Պոլսոյ տիեզերական ժողովը: Ուսանելի է բարեպաշտ քրիստոնեայի խոնարհ վարքը: Երբ Միլանի եպիսկոպոսը ի պատիժ Թեսալոնիկէի մէջ կազմակերպած ժողովուրդի կոտորածին, կայսրը կ'արգիլէ մոտք գործել եկեղեցի, վերջինս խոնարհաբար կը հնազանդի եւ միայն 8-ամսեայ ապաշխարութենէն յետոյ ոտք կը դնէ Աստուծոյ տաճարը:

Հայ Եկեղեցւոյ մէջ նոյն օրը կը նշուի նաեւ Եփեսոսի 7 մանկանց յիշատակութիւնը: Եփեսոսցի ազնուական 7 երիտասարդներ գաղտնի կը մկրտուին՝ ընդունելով քրիստոնեական հաւատքը: Վերջինիս համար կը հալածուին Դեկոս կայսրի կողմէն եւ կը պահուըտին մօտակայ լեռան (Ողքոս) քարայրին մէջ: Այստեղ աստուածառաք ջուկով կը ննջեն անոնք 140 տարի եւ կ'արթնան միայն 389 թուականին՝ Թեոդոս բարեպաշտ կայսրին օրով: Երբ կը բացայայտուի աստուածային հրաշքը, թագաւորն ու համաքաղաքացիները ամենամեծ պատիւներով կը դիմաւորեն հալածուած քրիստոնեաներուն: Վերադառնալով իրենց քարայրը, 7 երիտասարդները կրկին կը ննջեն, այս անգամ՝ յաւերժական ջուկով: Անոնց կը թաղեն նոյն քարայրին մէջ, որուն վրայ հետագային կը կառուցուի փառահեղ եկեղեցի մը:






Շաբաթ, 21 Յունուար, 2019

## Սուրբ Վկաներ Գորդիոսի, Պողիկտոսի եւ Գրիգորիսի Յիշատակութեան Օր

Գորդիոսը կեսարիացի հարիւրապետ էր, քրիստոնէայ ծնողներու զաւակ: Ան կը պաշտօնավարէր կայսրի բանակին մէջ Դիոկղէտիանոսի օրով: Ականատես ըլլալով բազմաթիւ անօրէնութիւններու՝ ան կ'երթայ անապատ՝ ինքզինք նուիրելով Աստուծոյ: Երբ Լիկիանոս կայսրը կը սկսի հալածել քրիստոնէաները, Գորդիոսը կ'երթայ Կեսարիա եւ հեթանոս բազմութեան կը խոստովանի, որ ինք քրիստոնէայ է ու կը սկսի քարոզել ճշմարտութիւնը: Չինք կը ձերբակալեն եւ կը ստիպեն, որ ան կուռքերուն զոհեր մատուցանէ: Սակայն սուրբը անդրդուելի էր: Բազմաթիւ չարչարանքներէ յետոյ ան 320 թուականին կ'աւանդէ հոգին: Քրիստոնէաները կը հաւաքեն անոր ոսկորներն ու պատիւով հողին կը յանձնեն:



Պողիկտոսը հայկական Մելիտինէ քաղաքին առաջին նահատակն է: Իր ընկերոջ շնորհիւ դարձի կու գայ եւ կ'ընդունի քրիստոնէութիւն: Ան կ'արգիլէ կայսերական հրովարտակի ընթերցումը կուռքերուն առջեւ՝ պատռելով զայն: Հաստատ մնալով իր հաւատքին կը գլխատուի՝ արժանանալով երկնային անթառամ պսակին: Նահատակուած է 259 թուականին:

Գրիգորիսը նահատակուած է 549 թուականին Դենշապուհի հալածանքներու ժամանակ: Ան ազգութեամբ պարսիկ էր, Ռաժիկ ցեղէն: Մինչեւ մկրտութիւնը կրած է Մանաճիիր անունը: ՄԺԵԺ Գնունի հայ մարզպանի օրով կը փախչի Հայաստան, կը մկրտուի՝ վերանուանուելով Գրիգորիս: Կ'առանձնանայ վանքի մը մէջ ինքզինք նուիրելով վանական կեանքին: Երբ Դենշապուհը Հայաստան կու գայ եւ կ'իմանայ, որ Գրիգորիսը նախապէս կրակապաշտ եղած էր, կը պարտադրէ անոր վերադառնալ իր հին հաւատքին: Բայց սուրբը չուրանար Քրիստոսին եւ կը նահատակուի:




# Holidays

Saturday, January 19, 2018

## Commemoration of the King St. Theodos and Children of Ephesus

King and distinguished Captain Theodos, who is called also Theodos the Great, is known to the Christian world as the greatest advocate and supporter of Orthodoxy.

In 379 being appointed the king of the East, pious Theodos allowed all the orthodox Bishops exiled upon the order of the previous king to return to their countries. According to the book "Life of the Saints" among them was the Armenian Pontiff St. Nerses. Another important step directed to the strengthening of the orthodox faith became the Ecumenical Council of Constantinople convened upon the order of the King Theodos in 381.



The modest behavior of the pious Christian is exemplary. When as punishment for the massacre of the people organized in Thessalonica the Bishop of Milan prohibited Theodos to enter the church, the king obeyed and entered the church only after repenting for 8 months.

On the day of commemoration of the King Theodos the Armenian Church commemorates also the memory of the 7 children of Ephesus. 7 noble young men from Ephesus were secretly baptized and became Christians. For adopting Christianity, they were persecuted by the king Dekos and hid themselves in the cave of the nearby mountain (Voghkos). By God's will they fell sleep in the cave for 140 years and woke up only in 389, during the period of reign of the king Theodos. When people became aware of that divine miracle, the king and the residents of Ephesus met the persecuted Christians with great respect and honor. Returning to their cave the 7 young men passed away. They were buried in the same cave, upon which later a magnificent church was built.

Monday, January 21, 2018

## Commemoration of Sts. Martyrs Gordios, Poghiktos and Grigoris

Gordios was a Captain from Caesaria. His parents were pious Christians. He served in the Royal Army during the reign of the Emperor Diocletian's. Witnessing many cases of unfairness and injustice, he was isolated and devoted himself



to God. When the Emperor Likianus started the persecutions against Christians, Gordios went to Caesaria and confessed to the heathen crowd that he was Christian and started to preach them the Truth. He was imprisoned and forced to offer sacrifice to the idols. But St. Gordios remained unshaken in his faith. After severe torments he passed away in 320 AD. Christians gathered his relics and buried them.

Poghiktos is the first martyr of the Armenian town Melitene. Thanks to his friend he adopted Christianity. He prohibited the reading of the King's Charter before the idols and tore it into pieces. For that deed he was martyred being beheaded. in 259 AD.

Grigoris has been martyred in 549 AD as the result of persecutions of the Persian king Denshapouh. Grigoris was Persian by nationality. Before baptism his name was Manajhr. During the reign of the Armenian Governor Mzhezh Gnouni he left for Armenia and was baptized and received a new name – Grigoris. Afterwards he entered a monastery and began to lead monastic life. When the King Denshapouh came to Armenia and found out that in the past Grigoris had been fire-worshipper, forced him to return to his old faith. But St. Grigoris did not betray Christ and was martyred.





Միրելի հաւատացեալներ,

Անոնք որոնք կը փափաքին, որ Հոգեւոր  
հովիւը այցելութիւն կատարէ իրենց հիւանդ  
ընտանեկան պարագաներուն կամ հարագատներուն



**Կրնան կապ հաստատել՝**

**Տէր Հօր հետ հեռաձայնելով՝ (514) 448-2809  
կամ Եկեղեցոյ գրասենեակ (514) 279-3066**

## **FAMILY PRAYER**

*God made us a family  
We need one another  
We love one another  
We forgive one another  
We work together  
We play together  
We worship together  
Together we use God's word  
Together we grow in Christ  
Together we love all men  
Together we serve our God  
Together we hope for Heaven  
These are our hopes and ideals  
Help us to attain them,  
O God, Through Jesus Christ  
our Lord*

**Dear Parishioners,**

If you have family members or relatives that  
you wish to have spiritual support,  
**Please feel free to contact  
Fr. David Margaryan directly at (514) 448-2809  
or call the secretariat at (514) 279-3066**





## ՏՆՕՐՀՆԷՔԻ ԱԻԱՆԴՈՅԹՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՅԹԸ




Տնօրհներք փափաքող  
հաւատացեալները կրնան  
հեռաձայնել Տ. Դաւիթ Քիւյ. Մարգարեանին՝ (514) 448-2809  
կամ  
Եկեղեցւոյ գրասենեակ՝  
(514) 279-3066

### The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.

At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt. It is a custom for the priest to bring with him a *nushkhar* as a symbol of the presence of God's blessing.

To request a Home Blessing, please contact with Fr. David  
Margaryan at (514) 448- 2809 or church office at (514) 279-  
3066.







# ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL**

## ԿԻՐԱԿԻ, 20 Յունուար 2019



Տիար Կարո Բապուճեանի,  
Տ. եւ Տիկ. Մըկըր եւ Վեհանոյշ Սերթի,  
Տ. եւ Տիկ. Պերճ եւ Նէնա Բապուճեանի եւ զաւակներուն,  
Տ. եւ Տիկ. Ռոպէր եւ Միրեամ Սերթի,  
Տ. եւ Տիկ. Թիակօ եւ Մելիսա Սերթի եւ զաւակին՝ Ալինայի,  
Տիկ. Ժերմին Աքչագըրեանի,  
Տ. եւ Տիկ. Մինաս եւ Զիլտա Կորկոտեանի եւ զաւակներուն,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր եւ քրոջ՝

**ՄԱՏԼԵՆ ԺԱՆԵԹ  
ԿՈՐԿՈՏԵԱՆ - ԲԱՊՈՒՃԵԱՆԻ  
(MADELEINE JANET  
GORGODIAN-PABUCCIYAN)  
մահուան առաջին տարելիցին առիթով  
ինչպէս նաեւ՝  
իրենց սիրեցեալ հօր եւ մեծ հօր՝  
ԺԻՐԱՅՐ ԲԱՊՈՒՃԵԱՆԻ  
(JIRAYR PABUCCIYAN)  
Յոգևոյն ի հանգիստ  
(Սուրճի սպասարկութիւն Վաչէ Յովսէփեան սրահին մէջ)**



Տիար Նուրհան Տեմիրտէօվէնի,  
Տիար Արման Տեմիրտէօվէնի,  
Տ. եւ Տիկ. Սեւան եւ Շերիլ Տեմիրտէօվէնի

ԵԼ զաւակներուն՝ Յաննայի եւ Քրիսի,  
Տ. եւ Տիկ. Կարէն եւ Տանիւլայ ՏԵՄԻՐՏԵՕՎԷՆԻ,  
Տ. եւ Տիկ. Մուրատ եւ Անահիտ ՏԵՄԻՐՎԵՕՎԷՆԻ եւ զակին՝ Ալէնի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ կնոջ, մօր, մեծ մօր եւ հարազատին՝

**ՆԱՏԻԱ ՏԵՄԻՐՏԵՕՎԷՆԻ**  
(NADIA DEMIRDOGEN)  
մահուան 16-րդ տարելիցին առիթով



Պոլսահայ Մշակութային Միութեան Վարչութեան  
եւ Եկեղեցւոյ Յարակից Մարմիններուն,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Թուրքիոյ մէջ  
ահաբեկչութեան պատճառով զոհուած «Ակօս» շաբաթաթերթի  
հիմնադիր խմբագրապետ եւ Հայ Դատի պաշտպան՝

**ՀՐԱՆԴ ՏԻՆԹԻ**  
(HRANT DINK)  
մահուան 12-րդ տարելիցին առիթով  
ինչպէս նաեւ՝  
Ազգային հերոս՝  
**ՍԱՐԳԻՍ ՀԱՅՊԱՆԵԱՆԻ**  
(SARKIS HATSPANIAN)  
Մահուան առաջին տարելիցին առիթով  
(Սուրճի սպասարկութիւն Մարի Մանուկեան սրահին մէջ)



Տիար Արթօ Մանուկեանի եւ զաւակներուն՝ Արէնի եւ Լօռիի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ զակին եւ եղբօր՝

**ՍԱՐՕ ԱՐՄԷՆ**  
**ՄԱՌԻԿԵԱՆԻ**  
(SARO ARMEN MANOUKIAN)  
Հոգւոյն ի հանգիստ



**Այրի Տիկ. Վերժին Քիւրքճիօղլուի,  
Տ. եւ Տիկ. Գարին եւ Ռոպեր Քիլաուզի  
եւ զաւակներուն՝ Պիանքայի եւ Սթիվընի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝**

**ԱՐԱ ՔԻՒՐՔՃԻՕՂԼՈՒԻ**

**(ARA KURKCUOGLU)**

**Ինչպէս նաեւ՝**

**Իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝**

**ՍԻՐՎԱՐԴ ԵՒ ԳԵՈՐԳ**

**ԵՍԱՅԵԱՆՆԵՐՈՒ**

**(SIRVART & KEVORK YESSAIAN)**

**Յոգիներուն ի հանգիստ**



**Տիկ. Սիլվա Պէքարեան-Գարաօղլանեանի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ հօր, մեծ հօր եւ մեծ մօր՝**

**ՍԱՐԳԻՍ ՊԵՔԱՐԵԱՆԻ**

**(SARKIS BEKARIAN)**

**Մահուան 14-րդ տարելիցին առիթով**

**Ինչպէս նաեւ՝**

**ԽԱՉԱՏՈՒՐ ԵՒ ՄԱՐԻԱՄ**

**ՊԵՔԱՐԵԱՆՆԵՐՈՒ**

**(KHATCHADOUR & MARIAM**

**BEKARIAN)**

**Յոգիներուն ի հանգիստ**



# ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ



**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

***Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal  
Donations of December 2018 / January 2019  
have been received with great appreciation***



## **CHURCH:**

**Mr. & Mrs. Arman Oduncuoglu \$300**

## **GOMIDAS 60<sup>th</sup> ANNIVERSARY BOOKLET:**

**Mr. & Mrs. Gerard Chadarevian \$100**

## **HOKEHANKISD:**

### **THE LATE SIRARPI KELARTINIAN SEVADJIBASHIAN:**

**Mr. & Mrs. Arto Sevadjibashian \$50**

### **THE LATE KEORHADJIAN FAMILY:**

**Mr. & Mrs. Krikor & Rosa Dikranian \$300,**

**Mr. & Mrs. Onnik & Marie Pilafian \$50**

### **THE LATE AGHAVNI & ARDASHES KASPARYAN:**

**Mr. & Mrs. Asot Kasparyan \$100**

### **THE LATE BERJUHI EGIAN:**

**Miss Naeli Egian \$50**

## **TZNOUNT YOUGHAKIN:**

**Mrs. Kristine Vaneskegian \$100, Mr. & Mrs. Boghos & Sirvart  
Kichian, Mrs. Nvart Mississian, Mrs. Lucy Garabedian \$50,  
Mrs. Chake Alexanian \$20**







## ՆԻՍՏ ՈՒ ԿԱՑ ԵԿԵՂԻՑԻՆ ՍԷՋ

**Ամենուն յատուկ ուշադրութեան եւ նկատառութեան կը հրաւիրենք հետեւեալ պարագաները. –**

- 1. Հաւատացեալները պարտին խոստովանիլ՝ Ս. Հաղորդութիւն ստանալէ առաջ:**
- 2. Կանայք երբ հաղորդուելու կը մերձեան, անհրաժեշտ է որ իրենց գլուխը ծածկեն քողով կամ գլխարկով:**
- 3. Երբ Եկեղեցի կ'երթանք մասնակցելու Ս. Պատարագին կամ այլ արարողութիւններու, պարտինք վայելուչ եւ լուրջ զգեստներ հագուիլ, ուշադիր ըլլալ մեր նիստ ու կացին, զգուշանալ ողջագուրումներէ եւ իրարու հետ խոսակցելէ:**
- 4. Երբ Եկեղեցին ենքու կը սպասենք մասնակցելու արարողութեան մը կամ արարողութեան աւարտին ենք եւ կը պատրաստուինք դուրս գալ Եկեղեցիէն, պէտք է խուսափիլ աղմկելէ կամ իրար հետ խօսակցելէ : Եկեղեցին աղօթքի Սուրբ վայր է: Այնտեղ՝ շարունակ եւ միշտ **ԼՈՒՌԹԻՒՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ** պէտք է տիրէ:**

### **OBSERVANCES PARTICULIÈRES À RESPECTER**

**Nous attirons tout particulièrement Votre attention sur les points suivants:**

- 1) Les fidèles doivent se confesser avant de recevoir la Sainte Communion.**
- 2) Les femmes doivent avoir la tête couverte pour communier.**
- 3) Chaque fois que nous entrons dans l'Église pour assister à une cérémonie religieuse, nous devons être attentifs à la dignité de notre tenue, à la célébration en cours et éviter de saluer ostensiblement nos proches ou nos amis dans ce lieu saint.**
- 4) Il est rappelé que l'Église est un lieu Saint où doivent toujours régner le calme et la sérénité.**

**Il est instamment demandé aux fidèles qui désirent se saluer, avant ou après les cérémonies, de le faire à l'extérieur de ce lieu de prières.**



**Website:**  
**[www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)**

Սիրելի հաւատացեալներ,

Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի, թէ  
յետայսու կարելի է այցելել Եկեղեցւոյ

**Կայքէջը - Website**  
**[www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)**

ուր պիտի գտնէք Եկեղեցւոյ վերաբերող լուրերը, ձեռնարկներու  
վերաբերեալ տեղեկութիւնները, կատարել Ձեր սրտաբուլի  
սուկրատուութիւնները եւ օգտուիլ ընձեռուած այլ կարելիութիւններէն  
համացանցային դրութեամբ:

Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:



Chers Paroissiens,

Nous avons le plaisir de vous informer de la récente mise à jour de notre

**Site: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)**

Ou vous trouvez les dernières nouvelles des activités et des  
événements.

*Nous remercions de votre soutien!*



Dear Parishioners,

We are glad to inform you our Church's newly developed

**Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)**

where you will read the latest church news and events,  
meanwhile you can also make your online church donations and benefiting from  
other possibilities of our Website.

*Thank you for your support!*





**Ուշադրութիւն**  
**Մեր Սիրելի**  
**Յաւատացեալներուն**



**Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ: Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

*Ծիսական Խորհուրդ*

**Attention to our beloved parishioners,**

**If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.**

**Thank you for your cooperation.**


*Parish Council*

# Սուրբ Սարգիս

## Աղաբլիթի սովորութեան մասին

Սուրբ Սարգիսի տօնին օրուան կը սպասեն յատկապէս դեռ չամուսնացած երիտասարդներն ու երիտասարդուհիները, որովհետեւ այդ օրը սովորութիւն է աղի բլիթ պատրաստել եւ ուտել՝ երագի մէջ իմանալու համար, թէ ո՞վ է ապագայ հարսնացուն կամ փեսացուն:

Թէ երբ սկսած է այս սովորութիւնը, յստակ յայտնի չէ: Շատ հաւանական է նաեւ, որ անիկա հին հեթանոսական գուշակութեան արարողութեան բաժնէն ըլլայ, որ մուտք գործած է քրիստոնէութեան մէջ: Աղը եւ հացը հաւանաբար կապուած են պահքի հետ, որուն շրջանը երբեմն կը կոչուի նաեւ աղուհացի օրեր:



Այսօր աղաբլիթի հետ կապուած արարողութիւնը երիտասարդներու կողմէ կը դիտուի որպէս գուշակութիւն: Սուրբ Եղիշէ պատմիչը կը յայտնէ որ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը եւ այլ հոգեւորականներ, ինչպէս նաեւ քրիստոնէաներ պահքի եւ աղօթքի մէջ կը մնային՝ իրենց անձերը հոգեսպան վնասներէ հեռու պահելու համար: Մինչդեռ այս օրուայ քրիստոնէաները յաճախ անգիտութեամբ պահքին կամ տօներուն կը կապեն նաեւ գուշակութիւնները, որոնց հետեւիլը չի վայելեր քրիստոնէաներուն: Կայ սատանայապաշտութեան գիտակցական եւ ոչ գիտակցական ձեւ: Ճիշդ է արտայայտուած այն տեսակետը որ մոգութեամբ, աստղագուշակութեամբ, ձեռնագուշակութեամբ կամ ոեւէ այլ գուշակութեամբ զբաղուիլը մարդուն կը քաշէ դէպի սատանայական ուժերու ոլորտը, որ դուրս է աստուածային լոյսի սահմաններէն, եւ այստեղ միայն հրաշքը կրնայ փրկել մարդուն:

Այդպէս է նաեւ այսպէս կոչուած ժողովրդական որոշ բժիշկներու գործելակերպը, որոնք տարբեր միջոցներով, նաեւ աղօթքներով կը բուժեն մարդոց եւ բժշկութեան վերջին փուլին համար կը դրկեն մարդուն եկեղեցի՝

**մկրտուելու, որովհետեւ անոնց պնդումով առանց անոր կարելի չէ շարունակել բժշկութիւնը:**

**Տաւօք, այսպէս դէպքեր նաեւ մեր մօտ ալ կան: Եւ կը պատահի որ մկրտութեան եկած ընտանիքի անդամները անկեղծօրէն կը խոստովանին որ իրենց մկրտութեան դրկած է այսպէս կոչուած բժիշկը բուժման յաջորդ փուլին անցնելու համար: Այս հասկնալի է որովհետեւ սատանային շատ աւելի ցանկալի է գայթակղիլ մկրտուած մարդու, քան թէ չմկրտուածին: Այսպէս են նաեւ որոշ ժողովրդական կոչուող բուժման տարօրինակ միջոցներ, որոնք գործածելէ հեռու մնալու խորհուրդ կու տանք քրիստոնէաներուն:**

**Վերադառնանք աղաբլիթին: Աստուածաշունչին մէջ ոչ մէկ տեղ չենք հանդիպիր, որ Աստուծոյ հաւատարիմ անձը գուշակութեան դիմեր՝ հասկնալու համար իր ապագայ կողակիցին: Սակայն Իսահակի համար կին ընտրելու մեկնած Աբրահամի ծառան կ'աղօթէ որ Աստուած իրեն հասկցնէ թէ ո՞վ է այն աղջիկը որ ինք պիտի ընտրէր Իսահակին համար (Ճննդոց 24:12-14):**

**Յետեւաբար, եթէ հետաքրքրուած ենք այս հարցով, մենք կրնանք աղօթել, սակայն ըստ Աստուածաշունչին, ան որ գուշակութիւն կ'ընէ պիղծ է Աստուծոյ առջեւ: Այս մասին միայն Աստուած ինքը կ'ըսէ Իսրայէլացիներուն, «Ձեր մէջ թող չի գտնուի այնպիսի մէկը, որ ... կախարդութեամբ կամ գուշակութեամբ զբաղուի, կանխագուշակումներ ընէ, ... ոգեհարցութեամբ զբաղուի, որովհետեւ Տիրոջ համար պիղծ է ան ով կը զբաղուի այդպէս բաներով. ... մարդիկ կը հաւատան հմայութիւններու ու կախարդութիւններու, բայց քու Տէր Աստուածդ քեզ այդպէս վարուելու հրաման չէ տուած» (Բ Օրինաց 18. 10-14):**







Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ  
Մայր Եկեղեցի  
**Ս. Սարգիս Զօրավար  
Երիտասարդներու  
Օրհնութեան Օր**



**Օրհնութեամբ՝**

Բարձրաշնորհ

**Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ**

Առաջնորդ Գանատահայոց Թեմի

Սուրբ ԵԼ Անմահ Պատարագ

**Կիրակի, 17 Փետրուար 2019-ին**

**Սկիզբ ժամերգութեան – առաւօտեան ժամը 9:30ին  
Սուրբ Պատարագ – առաւօտեան ժամը 10:30-ին  
Երիտասարդներու Օրհնութիւն – ժամը 12:30-ին**

Պատարագիչ՝

**ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԶՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ**

Հոգեւոր Հովիւ

Յաւարտ Ս. Պատարագի Հիւրասիրութիւն  
«Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ ԵԼ հանդիպում  
Երիտասարդներու հետ:

**Բոլորիդ ներկայութիւնը ԵԼ աղօթքը ցանկալի են:**

Հոգեւոր Հովիւ ԵԼ Ծխական Խորհուրդ

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/



[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

[www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca)





## Ս. Գրիգոր Լուսավորիչ Պատանեկան Երաժշտական Խումբ



### Jeunesse Musicale St-Grégoire d'Outremont

Պատանեկան Երգչախումբի փորձերը տեղի  
կ'ունենան

Կիրակի օրերը կեսօրէ ետք, ժամը 1-ին:

**Les répétitions de la chorale des Jeunes ont lieu  
Les dimanches à 13:00 heures**

Յաւելեալ մանրամասնութեանց համար կապ  
հաստատել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:

**Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de  
l'église.**

#### Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

#### Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նորթաները, միաժամանակ պիտի մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Հայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.



**Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ  
Curé & Conseil Paroissial**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/  
Fax: (514)279-8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ  
Մայր Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -14 տարեկան երեխաներու համար

### École de dimanche Pour les enfants de 6 à 14 ans

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
  - Հայերէն լեզու
- Հաճելի Պատմուածքներ եւ անակնկալներ
- Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Կիրակնօրեայ Վարժարանը տեղի կ'ունենայ  
ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար  
հեռաձայնել՝ Եկեղեցւոյ

գրասենեակ (514) 279-3066

Տէր Դաւիթ Քհնյ. Մարգարեան



École de dimanche  
Pour les enfants de 6 à 14 ans  
Dans une ambiance chaleureuse et amicale on  
Offre aux enfants :

- Initiation aux Psaumes et chants
- Connaissance de la langue arménienne
- Histoires instructives et divertissements
- Sorties récréatives et successives

**Chaque dimanche à 11 heures**

Pour plus amples informations et inscription  
Contacter le secrétariat de l'Église (514) 279-3066  
Père David Margaryan



**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ  
ԵՒ  
ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ**

**Տ. ԴԱԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ  
ՀԵՏ**

**Études bibliques et discussions  
avec le R.P David Margaryan**

**Տեղի կ'ունենայ ամեն հինգշաբթի  
երեկոյեան՝ ժամը 7:00-ին եկեղեցւոյ մէջ:**

**Les jeudis soirs à compter de 19 heures**

**Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները  
մասնակից ըլլալու**

**Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանի՝  
ներկայացուցած**

**Աստուածաշնչական նիւթերուն:**

**Nous invitons nos chers fidèles à participer  
à ces séances d'interprétations bibliques.**

**Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն**

**Une collation de café et de thé est servie.**

**Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին  
ներկայութիւնը:**

**Nous comptons sur votre  
participation massive.**

**615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:**

**(514)279-8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)**

**Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**